

# 1-ին կիսամյակի թեմաներին համապատասխան առաջադրանքների օրինակներ՝ ըստ գաղտնագրված վերջնարդյունքերի, բարդության և կարողունակությունների<sup>1</sup>

## 1. Լրացրու՝ նախադասությունները: 2Շ.Ե.Ի.Ն1-4 (միջին, վերաբերմունք)

- Ես ուրախանում եմ, երբ \_\_\_\_\_
- Ես տխրում եմ, երբ \_\_\_\_\_
- Ես զայրանում եմ, երբ \_\_\_\_\_
- Ես ամաչում եմ, երբ \_\_\_\_\_

## 2. Գտի՛ր համապատասխան ժամանակը և միացրու գծիկով: 2Շ.Ե.Ի.Ն1-5 (միջին, գիելիք, հմտություն)

1. Երբ ես փոքր էի, մայրիկն ինձ օգնում էր ամեն ինչում:	Ներկա
2. Հիմա ես արդեն վարժ կարդում եմ և գրում:	Ապագա
3. Ես որոշել եմ այգեգործ դառնալ:	Անցյալ

## 3. Խմբավորի՛ր բառերը և լրացրու աղյուսակում՝ թե որ ժամանակահատվածին են վերաբերում. 2Շ.Ե.Ի.Ն1-5 (բարդ, գիելիք, հմտություն)

Հիմա, հետո, նախկինում, առաջ, հետագայում, երեկ, վաղը, այս պահին, հենց հիմա, շատ շուտ, հնում, գալիք օրերում, կատարված, կատարվելիք, դեռ, արդեն

Ներկա	
Ապագա	
Անցյալ	

<sup>1</sup> Հեղ. Լուսինե Ալեքսանյան «Ես և շրջակա աշխարհը» առարկայի գնահատումը, թեմատիկ և կիսամյակային և ամփոփիչ հարցաշարերի շտեմարան, 2-4 դասարանների համար, Եևան 2010թ, հեղինակային հրատարակություն:

4. Թվարկի առնվազն երեք նմանություն և երեք տարբերություն: 2Շ.Ե.Ի.Մ3, (միջին, հմտություն)

<p><b>Նման են</b></p> <hr/> <hr/> <hr/>		<p><b>Տարբեր են</b></p> <hr/> <hr/> <hr/>
---	---	---

5. Նշի՛ր երեք հատկանիշ, որոնցով բոլոր մարդիկ իրար նման են և երեք հատկանիշ՝ որոնցով տարբեր են: 2Շ.Ե.Ի.Մ3, (միջին, հմտություն)

<p>Բոլոր մարդիկ նման են</p> <hr/> <hr/> <hr/>	<p>Բոլոր մարդիկ տարբեր են</p> <hr/> <hr/> <hr/>
---	---

6. Ընտրիր և ընդգծիր, ինչո՞վ են բոլոր մարդիկ նման իրար: 2Շ.Ե.Ի.Մ3, (միջին, հմտություն)

- ա) խելացի են
- բ) ծիծաղում են
- գ) բարի են
- դ) շնչում են
- ե) տղամարդ են
- զ) ուտում են

7. Գծերով միացրու՝ նախադասությունների համապատասխան կետերը: 2Շ.Ե.Ի.Մ1, (միջին, հմտություն)

Աչքերս ինձ օգնում են	զգալ բոլոր հոտերը՝ թե հաճելի, թե տհաճ:
Ականջներս ինձ օգնում են	տաքն ու սառը, հարթն ու անհարթը, կոշտն ու փափուկը:

Քիթս օգնում է	տեսնել ինձ շրջապատող իրերն ու կողմնորոշվել տեղանքում:
Լեզուն զգում է այն ամենի	լսել շուրջս հնչած ձայները, խոսքը, երաշխտությունն ու աղմուկը:
Մաշկս զգում է	Ջամը, ինչ ուտում եմ՝ քաղցրը, թթուն, դառն ու կծու:

**8. Տարբերակի՛ր բառերը: Ինչով ես զգում, ինչով ես իմանում: 2Շ.Ե.Ի.Մ1, (միջին, հմտություն)**

թխկոց, համ, նկար, կծու, զանգ, հեռու, անհարթ, բույր, գեղեցիկ, փշոտ, տաքություն:

աչք	ականջ	բերան	քիթ	ձեռք

**9. Որոշի՛ր և գծերով միացրու՝ ո՛ր արարքն է լավ, ո՛րը վատ: 2Շ.Մ.Փ.Դ1, 2Շ.Մ.Փ.Ը1ա, (միջին, վերաբերմունք, արժեք)**



Լավ է

Վատ է




10. Գրի՛ր, թե նկարների հերոսներից ովքեր ավելի առողջ կլինեն: **2Շ.Ե.Ա.Վ1**, (միջին, հմտություն, վերաբերմունք)



1) Անուշը պառկած գիրք է կարդում:




2) Գագիկը սիրում է հեծանիվ քշել:




3) Սաթիկը սիրում է թենիս խաղալ:

4) Սուսաննան ամբողջ օրը նստած է համակարգչի առջև:



5) Ռուզաննան ամեն օր մարզանք է անում:

6) Լուսիկը սիրում է դահուկով սահել:



7) Տիգրանը շատ է ուտում և քիչ շարժվում:

---

11. Նախադասությունները համարակալի՛ր այն հերթականությամբ, որ օրդ ճիշտ կազմակերպվի: **2Շ.Ե.Ի.Ն5**, (միջին, հմտություն, վերաբերմունք)

- Առավոտյան արթնանում եմ, լվացվում և ատամներս եմ մաքրում:
- Ընթրում եմ, լվացվում և պառկում եմ քնելու:
- Դպրոցից վերադառնում եմ, շորերս փոխում եմ և լվացվում:

- Ճաշում եմ և հանգստանում:
- Չազնվում եմ, նախաճաշում և գնում եմ դպրոց:
- Խաղում եմ, հեռուստացույց եմ դիտում:
- Դասերս եմ սովորում:

**12. Ի՞նչը կարող է օգնել հասնելու նպատակներին: 2Շ.Ե.Ի.Ն1-3.5, (միջին, հմտություն, վերաբերմունք)**

- Ա ծովությունը
- Բ աշխատասիրությունը
- Գ խորամանկությունը

**13. Ի՞նչը կարող է խանգարել նպատակներին հասնել: 2Շ.Ե.Ի.Ն1-3.5, (միջին, հմտություն, վերաբերմունք)**

- Ա ծովությունը
- Բ աշխատասիրությունը
- Գ հետաքրքրասիրությունը

**13. Կարմիր շրջանակի մեջ վերցրու՝ այն իրերը, որոնք անհատական օգտագործման համար են, իսկ կապույտի մեջ՝ այն իրերը, որոնցից ընտանիքում կարող եք բոլորդ օգտվել: 2Շ-Ե-Ի-Մ4ա, (միջին, հմտություն, վերաբերմունք)**




Սանր հայելի




սպունգ



եղունգի մկրատ



օճառ



ականջի մաքրիչ



սրբիչ



վարսահարդարիչ



ատամի մածուկ

ատամի խոզանակ

**14. Նշի՛ր, թե ով է պահպանում առողջ սնվելու կանոնները, և ով է խախտում: 2Շ.Ե.Ա.Ս1, (միջին, հմտություն, վերաբերմունք)**

- Անահիտն ամեն առավոտ նախաճաշում է, նոր գնում է դպրոց:
- Սուրենը հաճախ է ուտում մրգեր, բանջարեղեն և կաթնամթերք:
- Անին, շատ է սիրում աղի ուտել, նա ամեն ինչի վրա աղ է ավելացնում:
- Կարենը կոնֆետ շատ է սիրում և նախընտրում է քաղցր ուտելիքը:

**15. Կարմիր օղակի մեջ վերցրու ա՛յն մթերքները, որոնք ստանում ենք բույսերից, իսկ կապույտ օղակի մեջ՝ ա՛յն, որոնք մեզ տալիս են կենդանիները: 2Շ.Ե.Ա.Ս1բ, (պարզ, գիտելիք)**



**16. Գրիգորը կարծում է, որ կարող է մրգերից ստանալ առողջ մնալու համար անհրաժեշտ բոլոր սննդարար նյութերը: Սոնան կարծում է, որ Գրիգորը պետք է նաև ուրիշ տիպի սնունդ ուտի: Ո՞վ է ճիշտ: 2Շ.Ե.Ա.Ս1 (բարդ, գիտելիք)**

Ա Գրիգորը

Բ Սոնան

Բացատրի՛ր.

---






---

17. Լրացրու համապատասխան հեռախոսահամարները: **2Շ.Ե.Ա.Ի1գ**, (միջին, գիտելիք)

Շտապ բժշկական օգնություն	
Հրշեջ ծառայություն	
Գազի վթարային ծառայություն	
Ոստիկանություն	

18. Ներկի՛ր լուսացույցերից յուրաքանչյուրի ներքևում գրված կանոնին համապատասխան գույնը: **2Շ.Ե.Ա.Ի1**, (միջին, գիտելիք)

		
Կանգնի՛ր, ճանապարհը մեքենաներինն է:	Ճանապարհը քոն է, կարող ես անցնել:	Չգուշացի՛ր և սպասի՛ր:

19. Ի՞նչ հետևանք կարող է ունենալ. **2Շ.Ե.Ա.Ի1** (բարդ, գիտելիք, վերաբերմունք)



ԵՔԵ  
ԲԵՌՆԱՏԱՐԻ  
ԹԱՓՔԻՑ  
ԿԱԽՎԵՍ



ԵՔԵ ՄԵՆԱԿ  
ԳՆԱՍ  
ԳԵՏՈՒՄ  
ԼՈՂԱԼՈՒ

---



---



---



---



---



---

**20. Լրացրու՝ անվտանգության կանոնները, որոնք պետք է հիշես երկրաշարժի ժամանակ: 2Շ.Ե.Ա.Ի1բ (միջին, գիտելիք)**

1. Եթե շենքի ներսում ես, մտի՛ր \_\_\_\_\_ կամ մահճակալի տակ:
2. \_\_\_\_\_ հիմնական պատերի դռան բացվածքում:
3. Եթե ցածր հարկում ես, դու՛րս \_\_\_\_\_:
4. Եթե դրսում ես, հեռու՛ մնա \_\_\_\_\_ից:

**21. Ի՞նչ պետք է անել առաջին հերթին, եթե տանը հրդեհ է բռնկվել, և դուք մենակ եք ... 2Շ.Ե.Ա.Ի1, 2Շ.Ե.Ա.Ի1ա (միջին, գիտելիք)**

- Ա արագ դուրս գալ բաց տեղ և զանգել 1-01
- Բ մտնել սեղանի տակ
- Գ ջուր լցնել կրակի վրա

**22. Էլեկտրական սարքերի կամ լարերի այրվելու դեպքում առաջին հերթին ի՞նչ է պետք անել: 2Շ.Ե.Ա.Ի1, 2Շ.Ե.Ա.Ի1ա (միջին, գիտելիք)**

- Ա տանից դուրս փախչել
- Բ բնակարանի էլեկտրական սնուցումը ապահովիչից անջատել
- Գ վրան ջուր լցնել

**23. Գտի՛ր նախադասությունների համապատասխան կետերը և գծերով միացրու՛: 2Շ.Ե.Ա.Ի1, 2Շ.Ե.Ա.Ի1ա (միջին, գիտելիք)**

- |                               |                            |
|-------------------------------|----------------------------|
| 1. Չի կարելի մոտենալ          | գ) առարկաների մի դիպչեք:   |
| 2. Կայծակի ժամանակ չի կարելի: | ա) էլեկտրական բաց լարերին: |
| 3. Դրսում ընկած անձանոթ       | բ) գետին:                  |



4. Մի մոտեցեք վարարած

դ) թաքնվել ծառերի կամ մետաղյա ծածկի տակ:

**24. Գրի՛ր ընտանիքիդ անդամների անունները, իսկ դիմացը գրի՛ր, թե նրանցից ո՛վ ինչով է զբաղված: 2Շ.Մ.Փ.Ը1ա (միջին, գիտելիք)**



---

---

---

---

---

**25. Լրացրու՞, թե որտեղ ես ապրում: 2Շ.Մ.Փ.Յ3, (միջին, գիտելիք)**

Իմ տունը գտնվում է \_\_\_\_\_ փողոցում:

Իմ փողոցը գտնվում է (քաղաք կամ գյուղ) \_\_\_\_\_ ում:

Իմ գյուղը կամ քաղաքը գտնվում է ի՛մ երկրում:

Իմ երկիրը \_\_\_\_\_ է :


**26. Ե՞րբ ենք նշում տոները: Գրի՛ր ամսաթվերը: Նշիր, թե որ տոնն հատկապես ինչու ես սիրում: 2Շ.Մ.Փ.Ը1բ, (միջին, գիտելիք, վերաբերմունք)**

Ա Նոր տարին \_\_\_\_\_

Բ Մայրիկների տոնը \_\_\_\_\_

Գ Անկախության օրը \_\_\_\_\_

**27. Դիտի՛ր նկարները և գրի՛ր, թե ինչ տոն է պատկերված: Որո՞նք ես ավելի շատ սիրում, և ինչու, մեկնաբանի՛ր: 2Շ.Մ.Փ.Ը1բ, (միջին, գիտելիք, վերաբերմունք)**



\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

28. Ով ինչպես է օգնում մարդկանց: 2Շ.Ս.Փ.Հ1-4, 2Շ.Ս.Փ.Հ3ա (միջին, գիտելիք)

Ոստիկանը \_\_\_\_\_

29. Ինչպե՞ս է օգնում մարդկանց. 2Շ.Ս.Փ.Հ1-4, 2Շ.Ս.Փ.Հ3ա (միջին, գիտելիք)

Բժիշկը \_\_\_\_\_

30. Ո՞վքեր կարող են լավ ընկեր լինել: 2Շ.Ս.Փ.Դ3, (պարզ, հմտություն, վերաբերմունք)

Ա տղաները

Բ թե՛ աղջիկները, թե՛ տղաները

Գ աղջիկները

31. Գծերով միացրու՛, թե նկարներում պատկերված մարդկանցից ով ինչ է անում:

2Շ.Մ.Փ.Յ1-4, 2Շ.Մ.Փ.Յ3ա (միջին, գիտելիք, հմտություն)



բժիշկ

ուստիկան

վաճառող

դերձակ

աղբահավաք

վարսավիր

խոհարար

շինարար

- ապրանք է վաճառում
- հագուստ է կարում
- ուտելիք է պատրաստում
- հիվանդներին է բուժում
- մազերն է հարդարում
- պաշտպանում է մարդկանց
- շենքեր է կառուցում
- աղբն է հավաքում



32. Եթե դու լինեիր տղաներից մեկը՝ ի՞նչ կառաջարկեիր ընկերոջդ, որպեսզի ձեր վեճը խաղաղ ավարտվեր: 2Շ.Մ.Փ.41, 2Շ.Մ.Փ.41ա, (բարոյ, հմտություն, վերաբերմունք)




---




---



---


33. Ո՞ր նկարների հերոսներն են ընկերներ, որոնք՝ ոչ: 2Շ.Մ.Փ.Դ3, (պարզ, հմտություն, վերաբերմունք)



1



2




3



4



5



6

Ընկերներ են \_\_\_\_\_

Ընկերներ չեն \_\_\_\_\_

34. Նշի՛ր այն հատկանիշները, որոնք հատուկ չեն ընկերոջը: 2Շ.Մ.Փ.Դ3, (միջին, հմտություն, վերաբերմունք)

ա) ազնիվ

ե) հավատարիմ

բ) խորամանկ

զ) ստախոս

գ) ուրախ

է) անկեղծ

դ) ուշադիր

ը) եսասեր

35. Նշի՛ր, թե ինչպիսին պիտի լինի ընկերը: **2Շ.Մ.Փ.Դ3**, (միջին, հմտություն, վերաբերմունք)

- ա) ազնիվ
- բ) խորամանկ
- գ) ուրախ
- դ) ուշադիր
- ե) հավատարիմ
- զ) ստախոս
- է) անկեղծ
- ը) եսասեր

36. Ինչպե՞ս կվարվես. **2Շ.Մ.Փ.Դ2, 2Շ.Մ.Փ.Ը1-2, 2Շ.Ե.Ի.Մ3**, (բարդ, հմտություն, վերաբերմունք, արժեք)

- Ա Եթե ընկերոջդ ծաղրում եմ...
- Բ Եթե փողոցում ինչ-որ երեխաներ տանջում են կատվին...
- Գ Եթե պապիկը, որը տեսողության խնդիր ունի, փորձում է անցնել փողոց...
- Դ Եթե հաշմանդամի սայլակով ընկերդ պետք է բարձրանա առանց թեքահարթակի աստիճանները...

37. **Ղպրոցի** բարձր դասարանցի տղաներից մեկը քեզ ուղարկում է ծխախոտ կամ ալկոհոլ գներու: Ի՞նչ կանես, ինչ կպատասխանես: **2Շ.Մ.Փ.Դ1** (բարդ, հմտություն, վերաբերմունք, արժեք)

---

---

---

38. **Ղպրոցի** բարձր դասարանցի աղջիկներից մեկը քեզ ծաղրում է ու խանութ ուղարկում տարբեր գնումներ կատարելու: Ի՞նչ կանես, ինչպես կվարվես: **2Շ.Մ.Փ.Դ1** (բարդ, հմտություն, վերաբերմունք, արժեք)

---

---

**39. Ո՞ր պնդման հետ համաձայն չես: 2Շ.Մ.Փ.Յ2-4 (պարզ, գիտելիք, հմտություն)**

- Ա Գյուղում մարդիկ տեղաշարժվում են ավտոբուսներով և տրոլեյբուսներով:
- Բ Գյուղում մարդկանց մեծ մասը ճանաչում են միմյանց:
- Գ Գյուղում կարող են ձիով շրջել:
- Դ Գյուղում շատ փողոցներ ու բարձրահարկ շենքեր կան:

**40. Ո՞ր պնդումը ճիշտ չէ: 2Շ.Մ.Փ.Յ2-4 (պարզ, գիտելիք, հմտություն)**

- Ա Զաղաքում կան բազմաթիվ թանգարաններ և թատրոններ:
- Բ Զաղաքում մարդիկ բանջարանոցներ ու այգիներ են մշակում:
- Գ Զաղաքում շատ փողոցներ ու բարձրահարկ շենքեր կան:
- Դ Զաղաքում օդը մաքուր է և առավոտյան արթնանում ես արջրի կանչից:

**41. Խմբավորի՛ր սննդամթերքները քեզ հայտնի խմբերում՝ ձավարեղեն-հացեղեն, մսեղեն-լոբազգիներ, միրգ-բանջարեղեն, կաթնեղեն և լրացրու աղյուսակը. 2Շ.Ե.Ա.Ս1ա, (միջին, գիտելիք, հմտություն)**

հաց, կաթնաշոռ, վարունգ, կեռաս, պանիր, հնդկաձավար, կարագ, կաղամբ, հատիկ լոբի, ձուկ, մակարոն, երշիկ, ծիրան, լոլիկ, հավ, մածուն, բրինձ, ձեթ, գազար, կանաչ ոլոռ


Ձավարեղեն- հացեղեն	Ձուկ-Մսեղեն- լոբազգիներ	Միրգ- բանջարեղեն	Կաթնեղեն	Յուղեր

**42. Ինչու՞ է հարկավոր սնվել և ջուր խմել: 2Շ.Ե.Ա.Ս2, (միջին, գիտելիք)**

Դրանց շտրիկ մենք՝

- Ա շնչում ենք, խաղում և ծիծաղում
- Բ աճում ենք, զարգանում և եռանդ ստանում
- Գ զարգանում ենք, աճում և հոգևում

43. Կանաչ գույնով ընդգծիր ա՛յն ուտելիքները, որոնք օգտակար են, իսկ կարմիրով՝ նրանք, որոնք չարաշահելը վնաս է առողջությանը: 2Շ.Ե.Ա.Ս1, (միջին, գիտելիք, վերաբերմունք)



44. Ի՞նչ են կարծում, ինչու՞ է կարևոր միշտ նույն ժամերին սնվելը և ռեժիմը պահպանելը, մեկնաբանի՛ր: 2Շ.Ե.Ա.Ս1գ, (բարդ, գիտելիք, վերաբերմունք)

---



---



---

45. Ի՞նչ հետևանք կարող է ունենալ: 2Շ.Ե.Ա.Ի1, 2Շ.Մ.Փ.Ի2 (բարդ, գիտելիք, հմտություն, վերաբերմունք)




---



---



---



---

46. **Գտի՛ր** յուրաքանչյուր կանոն-նախադասության վերջը և կողքը գրիր համապատասխան սկզբի համարը: **2Շ.Ե.Ա.Ի1ա** (միջին, գիտելիք, հմտություն, վերաբերմունք)

1. Կարմիր լույսով փողոցն անցնել չի՝	զգուշացնելու, տան միշտ պետք է իմանան, թե որտեղ ես:
2. Մի հեռացիր տանից՝ առանց	կարող եք վայր ընկնել և խիստ վնասվել:
3. Տանը չի կարելի շաղ տալ, ծակող, կտրող, սուր առարկաները,	արագ դուրս արի տանից և հարևանին խնդրիր զանգահարել 1-01
4. Ոչ մի դեպքում չի կարելի կախվել լուսամուտից կամ պատշգամբից,	կարելի, նույնիսկ եթե մեքենաներ չկան:
5. Եթե հրդեհ է բռնկվել տանը և դու մենակ ես,	դրանք կարող են վնասել տան անդամներին և քեզ:

47. **Գրի՛ր** առողջության պահպանման երկու կանոն: **2Շ.Ե.Ա.Վ1-ա,բ,գ**, **2Շ.Բ.Բ.Փ2-4**, (բարդ, գիտելիք, վերաբերմունք)

48. **Գրի՛ր** մեկ վնասակար սովորություն: **2Շ.Ե.Ա.Վ1** (պարզ, գիտելիք, վերաբերմունք)

49. **Ո՞ր գործողությունները** կարող են պաշտպանել քեզ, եթե շուրջդ կան կամ կարող են լինել վարակիչ հիվանդներ: Կարող ես նշել մեկից ավելի տարբերակ: **2Շ.Ե.Ա.Վ1բ** (միջին, գիտելիք, վերաբերմունք)

- Գլխարկ դնելը
- Տաք հագնվելը
- Դիմակ կրելը
- Տանը փակվելը
- Հիգիենայի կանոնները պահելը, հաճախ լվացվելը
- Դասերը սովորելը ու գիրք կարդալը



- Պատվաստվելը, եթե պատվաստանյութ կա
- Քնելը
- Դեղեր խմելը
- Ուտելը

50. **Ինչերը կարող են** աղտոտել շրջակա միջավայրը: Կարող եք նշել մեկից ավելի տարրերակ: **2Շ.Բ.Բ.Փ2-4** (բարդ, հմտություն, վերաբերմունք)

- Թափված աղբը
- Քամիները
- Մեքենաների ծուխը
- Անձրևն ու ցեխը
- Գործարանների արտադրած ծուխը և թափոնները
- Չորացած ծառերը
- Ծխախոտի ծուխը
- Թափված սննդի մնացորդները

51. **Շրջակա միջավայրի** աղտոտումը կարո՞ղ է վնասել մարդկանց առողջությունը: **2Շ.Բ.Բ.Փ2-4** (պարզ, գիտելիք)

- Այո
- Ոչ

52. **Ծխախոտի** ծուխը վնասակար է. **2Շ.Ե.Ա.Վ1ա** (միջին, գիտելիք, վերաբերմունք)

- Ա ծխողների առողջությանը
- Բ ծխողների մոտ գտնվող երեխաների առողջությանը
- Գ թե՛ ծխողների և թե՛ բոլոր ծուխը շնչողների առողջությանը